ՀՀ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանի շնորավորական ուղերձը
Հաղթանակի եւ խաղաղության օրվա կապակցությամբ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Շնորհավորում եմ Մայիսի 9-ի՝ Հաղթանակի եւ խաղաղության օրվա կապակցությամբ: Հայ ժողովրդի համար մայիսը հաղթանակների ամիս է: Այս ամսվա բոլոր օրերի մեջ, սակայն, առանձնանում է Մայիսի 9-ը՝ իբրեւ Հայրենական Մեծ պատերազմում Ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած փառահեղ հաղթանակի եւ Արցախյան պատերազմում՝ Շուշիի ազատագրման օր:

Անհերքելի է Խորհրդային բանակում մարտնչող հայ մարտիկների ունեցած հերոսական մասնակցությունը եւ անմնացորդ նվիրումը հայրենիքին: Նաեւ մեր՝ հայազգի քաջորդիների սխրանքների շնորհիվ էր, որ ջախջախիչ պարտության մատնվեց թշնամին: Դա , իսկապես, մեծագույն նվաճում էր նաեւ հայ ժողովրդի համար, եւ ձեռք բերված խաղաղությունը՝ օրախնդիր ու բաղձալի:

Ճակատագրի կամոք, նույն՝ Մայիսի 9-ին հայ ժողովուրդը եւս մեկ՝ կարեւորագույն հաղթանակ ունեցավ: Համառ եւ կատաղի մարտերի արդյունքում ազատագրվեց Շուշին՝ մեկընդմիջտ հաստատելով մեր ժողովրդի անպարտելիությունն ու ռազմական ոգին:

Այս հաղթանակները ձեռք են բերվել մեր ժողովրդի լավագույն զավակների, հարյուր հազարավոր շարքային մարտիկների ու նշանավոր զորահրամանատարների անձնվիրության, սխրագործության շնորհիվ: Մենք գլուխ ենք խոնարհում բոլոր նահատակ հերոսների հիշատակի առջեւ, փառաբանում նրանց սխրանքը:

Սիրելի հայրենակիցներ, կրկին շնորհավորում եմ այս փառապանծ տոնի կապակցությամբ: Մաղթում եմ խաղաղություն, ամենայն բարիք, հզորություն՝ մեր պետությանն ու անպարտելի ժողովրդին: